# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 286 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 3-Ի N 986-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

1. Հայաստանի Հանրապետության վարչապետի 2023 թվականի հոկտեմբերի 3-ի «Հայաստանի Հանրապետության պետական պահպանության ծառայության ծառայողներին հավելավճար հաշվարկելու նպատակով ատեստավորման կարգը, հավելավճարի հաշվարկման կարգը և հաշվարկված հավելավճարի վճարումը դադարեցնելու հիմքերը սահմանելու մասին» N 986-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) նախաբանում «13-րդ մասերով» բառերը փոխարինել «22-րդ մասերով» բառերով.

2) 2-րդ կետի 2-րդ ենթակետում «6-րդ մասով» բառերը փոխարինել «9-րդ մասով» բառերով.

3) 2-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 3.1-ին և 3.2-րդ ենթակետերով.

«3.1) առաջխաղացման կարգով բարձր պաշտոնի նշանակման դեպքում նոր պաշտոնում ատեստավորման արդյունքներով «Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման մասին» օրենքի 17.1-ին

հոդվածի 13-րդ մասի 2-րդ կետով նախատեսված եզրակացությունը կայացվելու դեպքում՝ եզրակացության կայացման օրվանից.

3.2) ծառայության պետի տեղակալի զինվորական ծառայության պաշտոնում նշանակվելու դեպքում.».

4) ուժը կորցրած ճանաչել 2-րդ կետի 4-րդ և 6-րդ ենթակետերը:

2. Որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված N 1 հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) 5-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5. Ծառայությունում առաջին անգամ պաշտոնի նշանակված ծառայողները (այդ թվում՝ «Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման մասին» օրենքի 16.2-րդ հոդվածի 7-րդ մասում նշված անձինք) ատեստավորման համար կարող են դիմել պաշտոնի նշանակվելու օրվանից ոչ շուտ, քան երեք ամիս հետո, իսկ մասնագիտական վերապատրաստման պարտադիր դասընթացներ անցնող ծառայողները՝ ոչ շուտ, քան դասընթացներն ավարտելուց երկու ամիս հետո:».

2) N 1 հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 5.1-ին և 5.2-րդ կետերով.

«5.1. Առաջխաղացման կարգով բարձր պաշտոնի նշանակված ծառայողներն ատեստավորման համար կարող են դիմել պաշտոնի նշանակվելու օրվանից ոչ շուտ, քան երեք ամիս հետո:

5.2. «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ և 6-րդ կետերով նախատեսված դեպքերում ցածր պաշտոնի նշանակված ծառայողներն ատեստավորման համար կարող են դիմել կարգապահական տույժը հանվելուց հետո:».

3) 6-րդ և 7-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6. Հղիության և ծննդաբերության, ինչպես նաև մինչև երեք տարեկան երեխայի խնամքի համար տրամադրվող արձակուրդում գտնվող ծառայողը ատեստավորման համար կարող է դիմել ոչ շուտ, քան արձակուրդից վերադառնալուց երկու ամիս հետո:

7. Կադրերի տրամադրության տակ գտնվող կամ պաշտոնավարումը կասեցված ծառայողը ատեստավորման համար կարող է դիմել ոչ շուտ, քան ծառայության անցնելուց երկու ամիս հետո:».

4) 18-րդ կետում «20 հարցից» բառերը փոխարինել «30 հարցից» բառերով.

5) 47-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«47. Թեստային առաջադրանքները գնահատվում են հետևյալ համամասնությամբ.

| Ճիշտ պատասխանների քանակը | Գնահատականը |
|---|---|
| 0-20 | անբավարար |
| 21-24 | բավարար |
| 25-27 | լավ |
| 28-30 | գերազանց |

».

6) 52-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«52. Հարցազրույցի փուլի արդյունքներով հանձնաժողովի կողմից գրավոր ձևով կայացվում է «Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման մասին» օրենքի 17.1-ին հոդվածի 13-րդ մասով նախատեսված եզրակացություններից որևէ մեկը, այն է՝

1) ենթակա է հավելավճար հաշվարկելու.

2) ենթակա չէ հավելավճար հաշվարկելու:».

7) 54-րդ կետում «չհաշվարկել հավելավճար» բառերը փոխարինել «ենթակա չէ հավելավճար հաշվարկելու» բառերով.

8) 62-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«62. Ատեստավորմանը մասնակցած այն ծառայողները, որոնց վերաբերյալ կայացվել է սույն կարգի 52-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված եզրակացությունը, հավելավճար հաշվարկելու նպատակով նոր ատեստավորում անցնելու համար կարող են դիմել եզրակացության կայացման օրվանից ոչ շուտ, քան երեք ամիս հետո: Վերջիններիս ատեստավորումը կազմակերպվում և անցկացվում է սույն կարգի պահանջների համաձայն:»:

3. Որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված N 2 հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը՝

1) 2-րդ կետում «10-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված եզրակացություններից որևէ մեկը» բառերը փոխարինել «13-րդ մասի 1-ին կետով նախատեսված եզրակացությունը» բառերով.

2) 4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Հավելավճարը հաշվարկվում և վճարվում է «Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման մասին» օրենքի 17.1-ին հոդվածի 13-րդ մասի 1-ին կետով նախատեսված եզրակացությունը կայացվելու օրվան հաջորդող ամսվա 1-ից՝ աշխատավարձի (դրամական ապահովության) վճարման հետ միաժամանակ։».

3) 5-րդ կետում «10-րդ մասի 3-րդ կետով» բառերը փոխարինել «13-րդ մասի 2-րդ կետով» բառերով.

4) N 2 հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 5.1-ին կետով.

«5.1. Եթե ատեստավորման արդյունքներով կայացվել է «ենթակա է հավելավճար հաշվարկելու» եզրակացությունը, որից հետո ծառայողին տրամադրվել է հոլիության և ծննդաբերության կամ մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդ, կամ ծառայողը թողնվել է կադրերի տրամադրության տակ, կամ կասեցվել է նրա պաշտոնավարումը, ապա հավելավճարի հաշվարկման ժամկետն այդ ժամանակահատվածում կասեցվում է։ Այն վերսկսվում է սույն կետում նշված հանգամանքները վերանալու օրվանից։»։

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

09.04.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ